Հավելված
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի կառավարման խորհրդի
2025թ. մայիսի 16-ի թիվ 1 որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի (այսուհետ՝ կրթահամալիր) կառավարման խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) կրթահամալիրի մշտապես գործող կոլեգիալ կառավարման մարմինն է: Խորհուրդն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և կրթահամալիրի կանոնադրությամբ նախատեսված լիազորություններ:
2. Սույն աշխատակարգը սահմանում է խորհրդի գործունեության, որոշումների ընդունման և քվեարկության կարգը:

II. ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Խորհուրդը՝
1) հաստատում է իր աշխատակարգը և նիստերի ժամանակացույցը.
2) հաստատում է կրթահամալիրի ռազմավարական ծրագիրը.
3) քննարկում և գնահատում է ռեկտորի տարեկան հաշվետվությունը.
4) իր կազմից (բացառությամբ սովորող անդամների և Կրթահամալիրի հաստիքային աշխատողների) ընտրում է խորհրդի նախագահին՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ.
5) հաստատում է ռեկտորի ընտրության կարգը, հայտարարում է ռեկտորի ընտրության բաց մրցույթ.
6) մշակում և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի միջոցով կառավարություն է ներկայացնում կրթահամալիրի կանոնադրությունը կամ դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծեր.
7) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում ռեկտորի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող հրամանները, որոշումները, հրահանգները և ցուցումները.
8) լսում է կրթահամալիրի գործունեության մասին հաշվետվություններ, քննում վերջիններիս վերստուգման արդյունքները.
9) ռեկտորի նկատմամբ խրախուսանքներ և կարգապահական տույժեր կիրառելու միջնորդություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին.
10) ռեկտորի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի ներքին կարգապահական կանոններն ու աշխատողների պաշտոնային դրույքաչափերը.
11) հավանություն է տալիս կրթահամալիրի տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվեկշռի և տարեկան ծախսերի նախահաշվի նախագծերին.
12) վերահսկում է խորհրդի որոշումների կատարման ընթացքը.
13) իրականացնում է օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:
4. Խորհրդի իրավասությունների սահմաններում քննարկվող հարցերի վերաբերյալ խորհուրդն ընդունում է որոշումներ:

5. Եթե խորհրդի նիստում քննարկվում է խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի շահերին վերաբերող հարց, ապա խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

6. Խորհրդի աշխատանքները կազմակերպում և նիստը նախագահում է խորհրդի նախագահը: Խորհուրդը խորհրդի նախագահին ընտրում է առաջին նիստում: Մինչև խորհրդի նախագահի ընտրությունը խորհրդի նիստը նախագահում է խորհրդի՝ տարիքով ավագ անդամը: Խորհրդի նախագահի բացակայության դեպքում խորհրդի նախագահը իր պարտականությունների կատարումը հանձնարարում է խորհրդի անդամներից մեկին, իսկ հանձնարարման անհնարինության դեպքում խորհրդի նախագահի պարտականությունները կատարում է խորհրդի՝ տարիքով ավագ անդամը: Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ և խորհրդի որոշմամբ կարող է դադարեցվել խորհրդի նախագահի կարգավիճակը՝ պահպանելով խորհրդի անդամի կարգավիճակը: Այդ դեպքում սույն աշխատակարգով սահմանված կարգին համապատասխան ընտրվում է խորհրդի նախագահ:

7. Խորհրդի նախագահը՝

1) հրավիրում է խորհրդի նիստերը,

2) նշանակում է խորհրդի քարտուղար Կրթահամալիրի աշխատողներից.

3) խորհրդի համաձայնությամբ հարցերի նախնական քննարկման, դրանց վերաբերյալ եզրակացությունը խորհուրդ ներկայացնելու նպատակով ձևավորում է հանձնախմբեր և նշանակում դրանց նախագահներին.

4) ամփոփում է օրակարգի հարցերի քննարկումները.

5) խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքեր առաջանալու դեպքում՝ եռօրյա ժամկետում այդ մասին հայտնում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին կամ գիտական խորհրդի նախագահին.

6) հաստատում է խորհրդի որոշումները.

7) իրականացնում է օրենքով և կրթահամալիրի կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

8. Խորհրդի քարտուղարը՝

1) նախապատրաստում է խորհրդի նիստերը, ձևավորում է նիստի օրակարգի նախագիծը, նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցում է խորհրդի անդամներին.

2) խորհրդի նիստն սկսելուց առաջ կատարում է խորհրդի անդամների գրանցում, որը հաստատագրվում է նիստին ներկա անդամների ստորագրությամբ.

3) խորհրդի նիստում ներկայացնում է տեղեկություններ խորհրդի նիստին անդամների մասնակցության մասին.

4) վարում է խորհրդի նիստերի արձանագրությունները.

5) պատրաստում է փակ գաղտնի քվեարկության քվեաթերթիկները, քվեարկությանը մասնակցող խորհրդի անդամների ցուցակը, քվեարկության արդյունքների գրանցման ձևաթղթերը և քվեարկությունից առաջ դրանք հանձնում հաշվիչ հանձնաժողովի նախագահին.

6) պատրաստում է խորհրդի որոշումների նախագծերը, ստորագրում ընդունված որոշումները, դրանք հինգ աշխատանքային օրվա ընթացքում հանձնում է ըստ պատկանելության և կատարման:

9. Խորհրդի անդամների պարտականություններն են.

1) մասնակցել խորհրդի նիստերին.

2) իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել կրթահամալիրի շահերից:

10. Խորհրդի անդամների իրավունքներն են՝

1) ներկայացնել առաջարկություններ նիստի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.

2) նախապատրաստել և խորհրդի քննարկմանը ներկայացնել հարցեր, առաջարկություններ ու որոշումների նախագծեր.

3) հարցեր տալ խորհրդի նախագահին, զեկուցողներին և ելույթ ունեցողներին.

4) մասնակցել որոշումների ընդունմանը:

III. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԸ

11. Խորհրդի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Խորհրդի հերթական նիստերը գումարվում են առնվազն տարեկան մեկ անգամ՝ խորհրդի նախագահի նախաձեռնությամբ՝ խորհրդի քարտուղարին տրված՝ խորհրդի հերթական նիստ նախապատրաստելու մասին հանձնարարության միջոցով:

12. Խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև արտահերթ՝ խորհրդի անդամների 1/3-ի պահանջով կամ ռեկտորի նախաձեռնությամբ: Խորհրդի նախագահը խորհրդի անդամների պահանջով կամ ռեկտորի նախաձեռնությամբ արտահերթ նիստը հրավիրում է այն ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում: Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով նիստ հրավիրելու դեպքում նիստի օրակարգը ձևավորում են նախաձեռնողները և այն փոխանցում են խորհրդի նախագահին: Ռեկտորի նախաձեռնությամբ նիստ հրավիրելու դեպքում ռեկտորը նիստի օրակարգի նախագիծը փոխանցում է խորհրդի նախագահին: Այդ նախաձեռնությունների հիման վրա խորհրդի նախագահը գումարում է խորհրդի արտահերթ նիստ՝ խորհրդի քարտուղարին տրված՝ խորհրդի արտահերթ նիստ նախապատրաստելու մասին հանձնարարության միջոցով:

13. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին, բացառությամբ սույն աշխատակարգի 14-րդ կետով սահմանված դեպքերի: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, բացի սույն աշխատակարգի 14-րդ կետով սահմանված դեպքերի: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

14. Խորհրդի նախագահի ընտրության, ռեկտորի ընտրության, ռեկտորի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող հրամանները, որոշումները, հրահանգները և ցուցումները կասեցնելու կամ ուժը կորցրած ճանաչելու, ռեկտորի նկատմամբ խրախուսանքի և կարգապահական տույժի կիրառման միջնորդությամբ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին դիմելու, Կրթահամալիրի կանոնադրության մեջ փոփոխության և լրացման, նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման առաջարկությամբ կառավարությանը դիմելու համար Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին միջնորդությամբ դիմելու մասին որոշումներն ընդունելու նիստերն իրավազոր են, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը: Նշված որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

15. Խորհրդի անդամը ներկայացված հարցերի վերաբերյալ կարող է քվեարկել «Կողմ» կամ «Դեմ», որի հիմքով խորհրդի քարտուղարը կազմում է արձանագրություն:

16. Փակ գաղտնի քվեարկության ձայները հաշվելու համար խորհրդի անդամներից ընտրվում է 3 անձից բաղկացած հաշվիչ հանձնաժողով:

17. Հաշվիչ հանձնաժողովը կազմակերպում է փակ գաղտնի քվեարկությունները, ապահովում է քվեարկության համար անհրաժեշտ պայմաններ, խորհրդի հաստատմանն է ներկայացնում քվեարկության արդյունքները:

IV. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

18. Խորհրդի նիստը բացում է խորհրդի նախագահը և քննարկման է ներկայացնում օրակարգի նախագիծը: Օրակարգի նախագիծը քննարկվում և հաստատվում է խորհրդի նիստին ներկա անդամների բաց քվեարկությամբ, սույն աշխատակարգի 13-րդ կետով նախատեսված կարգով:

19. Խորհրդի յուրաքանչյուր նիստի օրակարգի նախագիծը կարող է քվեարկությամբ համալրվել կամ փոխարինվել այլ հարցերով:

20. Խորհրդի նիստում օրակարգի հարցերը ներկայացնում է նախագահը կամ նախագահի հանձնարարությամբ խորհրդի քարտուղարը կամ տվյալ հարցը նախապատրաստող անձը:

21. Խորհրդում հարցերի քննարկումն սկսվում է օրակարգի հերթական հարցի զեկուցմամբ: Օրակարգի հարցը զեկուցելուց հետո նիստի մասնակիցների կողմից կարող են հարցեր ուղղվել զեկուցողին և ելույթ ունեցողին: Քննարկվող հարցի վերաբերյալ կատարվում է մտքերի փոխանակում (զեկուցման և ելույթների վերաբերյալ), որով ավարտվում է հարցի քննարկումը:

22. Խորհրդի որոշմամբ կարող է սահմանվել այլ աշխատակարգ: Աշխատակարգի սահմանման վերաբերյալ առաջարկությունը ընդունվում է բաց քվեարկությամբ:

23. Զեկուցողին հարցեր կարող են ուղղել միայն խորհրդի անդամները և ռեկտորը: Խորհրդի անդամները և ռեկտորը հարցեր կարող են ուղղել նաև խորհրդի նախագահին, քարտուղարին, ինչպես նաև քննարկվող հարցին անմիջապես առնչվող՝ կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ ռեկտորի նախաձեռնությամբ:

24. Օրակարգի հարցի քննարկման ավարտին հաջորդում է որոշման ընդունումը: Օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել հարցի քննարկումից անմիջապես հետո կամ բոլոր հարցերի քննարկումից հետո՝ օրակարգի հարցերի հերթականությամբ:

25. Ռեկտորի ընտրությունը կատարվում է համաձայն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ռեկտորի ընտրության կարգի պահանջների:

26. Որոշումն ընդունվելու դեպքում խորհրդի նախագահը հայտարարում է «Որոշումն ընդունված է»: Որոշումն ընդունելու կամ չընդունելու մասին գրառում է կատարվում արձանագրությունում:

V. **ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ**

27. Սույն աշխատակարգը փոփոխվում կամ լրացվում է խորհրդի որոշմամբ: